«Վարազդատ Առստամյան» Ա/Ձ „VarazdatArstamyan„ I/E

ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Գետափյան 2/1
Հեռ.՝ +374 94 30 10 16

*«Հաստատում եմ»*

*«Վարազդատ Առստամյան» Ա/Ձ տնօրեն՝*

*Վ. Առստամյան*

*«20» 12 2022թ.*

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

***ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Խնձորեսկ գյուղի Կալին գլուխ թաղամասի 3/2 անասնաշենքի հարևանությամբ գտնվող շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ***

Սույն եզրակացությունը տրվում է համաձայն ՀՀ քաղաքացի Սամվել Թունյանի և «Վարազդատ Առստամյան» Ա/Ձ միջև առ 12.12.2022թ. կնքված թիվ Ե-16/22 պայմանագրի:

Եզրակացություն տալու նպատակով «Վարազդատ Առստամյան» Ա/Ձ կողմից (ՔՊԼ 18366 տրված 14.06.2022թ.) կատարվել է ***ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Խնձորեսկ գյուղի Կալին գլուխ թաղամասի 3/2 անասնաշենքի հարևանությամբ գտնվող*** շինության ակնադիտական հետազննություն, չափագրման ու լուսանկարման աշխատանքներ:

***Շինության ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումները.***

Գորիս համայնքի Խնձորեսկ գյուղի Կալին գլուխ թաղամասի 3/2 անասնաշենքի հարևանությամբ գտնվող շինությունը մեկ հարկանի, մոտ 21.50x54.40մ արտաքին եզրաչափերի, ուղղանկյունաձև հատակագծով շինություն է (տես նկ. 1), այն շահագործվում է որպես անասնաշենք: Շինությունը ունի փոփոխական բարձրություն՝ կենտրոնական թռիչքում բարձրությունը կազմում է 4.2 մ, իսկ եզրային թռիչքներում՝ 2.5-4.2մ (հարկի բարձրությունը դիտվել է ծածկի

պարզունակի ներքին նիշի և հատակի մաքուր նիշի տարբերությունը): Այն տեղադրված է հարթ տեղանքում, հատակի նիշը համապատասխանում է սալվածքի նիշին:

Նկ. 1 Շինության ճակատների տեսքերը

Շինության կոնստրուկտիվ լուծումը տրված է հավաքովի երկաթբետոնյա (ե/բ) շրջանակային հիմնակմախքով և ծածկի կոշտ սկավառակով: Հավաքովի երկաթբետոնյա շրջանակային հիմնակմախքի համար կրող են հանդիսանում շինության լայնական ուղղությամբ իրականացված եռաթռիչք շրջանակները: Հիմնակմախքի կրող շրջանակները երկայնական ուղղությամբ տեղադրված են

6.0մ քայլով: Կենտրոնական թռիչքում շրջանակը ունի մոտ 6.0մ թռիչք, իսկ եզրային թռիչքներում՝ մոտ 7.10մ (տես նկ. 2):

Նկ. 2 Շինության կրող կոնստրուկտիվ տարրերի տեսքը ներսից

Շինության կոնստրուկտիվ տարրերն ունեն հետևյալ բնութագրերը.

• Հիմքերը սյունների տակ կետային են՝ հավաքովի ե/բ-ից, իսկ արտաքին պարփակող պատերի տակ՝ ժապավենային և իրականացված են խամքարաբետոնով:

• Հիմնակմախքի հավաքովի ե/բ սյուներն ունեն 30x30սմ լայնական կտրվածք:

• Հավաքովի ե/բ պարզունակները տավաձև են և ունեն 60սմ բարձրություն:

• Վերնածածկն իրակնացված է հավաքովի ե/բ կողավոր սալերով:

• Պարփակող պատերն իրականացված են հիմնականում 1.20×1.50մ չափերի հավաքովի երկաթբետոնե պատերով և ունեն 30սմ հաստություն:

• Տանիքը լանջավոր է, անկազմակերպ ջրաթափումով, իրականացվել է թեթև մետաղական կոնստրուկցիաներով և մետաղական ալիքավոր թերթերի ծածկույթով:

• Սալվածքը բացակայում է:

***Հետազոտության արդյունքում պարզվել է.***

1. ***ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Խնձորեսկ գյուղի Կալին գլուխ թաղամասի 3/2 անասնաշենքի հարևանությամբ գտնվող*** շինության կոնստրուկտիվ տարրերի վնասվածքներ, ձևախախտումներ, ճաքեր չկան: Շինության պատերի, ծածկի ու վերնածածկի, տանիքի տեխնիկական վիճակը լավ է: Բացակայում են հիմքերի անհավասարաչափ դեֆորմացիաների նշաններ: Շենքի ընդհանուր կոնստրուկտիվ համակարգում չկան դրա շահագործման հուսալիության վրա ազդող վնասվածքներ ու թերություններ:

***Հիմնվելով հետազոտության արդյունքներին եզրակացնում ենք.***

1. Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 08.12.2009թ. թիվ 282-Ն հրամանով հաստատված հավելված N 1-ի՝ «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտման մեթոդական ցուցումների», ***ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Խնձորեսկ գյուղի Կալին գլուխ թաղամասի 3/2 անասնաշենքի հարևանությամբ*** գտնվող շինության տեխնիկական վիճակը գնահատվում է 2-րդ աստիճան (բավարար), այն է՝ կոնստրուկտիվ տարրերը ընդհանրապես պիտանի են շահագործման համար:

2. Շինության կոնստրուկտիվ լուծումները չեն հակասում ՀՀ գործող «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» ՀՀՇՆ 20.04-2020 շիննորմերի պահանջների հետ և այն ենթակա է շահագործման:

Կատարող՝

Ճարտարագետ, տ.գ.թ. Հ. Խլղաթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

## ՔՊԼ 18366

( լիցենզիայի համարը )

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԾԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՈՒԹՅՈՒՆ

( գործունեության տեսակը )

«14 ՀՈՒՆԻՍԻ 2022թ.» ՎԱՐԱԶԴԱՏ ԱՌՍՏԱՄՅԱՆ ԼԵՎՈՆԻ Ա/Ձ, ՍՅՈՒՆԻՔ, ԳՈՐԻՍ, ԳԵՏԱՓՆՅԱ Փ. 2, 1

Տրված է

( լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունն ու բնակության վայրը )

Գործողության ժամկետը՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրություն)
Կ.Տ.

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ
(անուն,ազգանուն)